ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 369

*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

*ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքը (Մասիս քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ*

*(Մասիս համայնքի (Մասիս քաղաքի) գոտևորման նախագծերի մասով)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

*ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքը (Մասիս քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արարատ-1 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

| ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի (Մասիս քաղաքի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 03-003-0137-0768 և 03-003-0137-0767 կադաստրային ծածկագրերով 2.5911 հա և 1.0349 հա մակերեսներով ըստ ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2021 թվականի N60-Ա որոշմամբ հաստատված գլխավոր հատակագծի բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների հողերից (ըստ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողեր) | 03-003-0137-0768 և 03-003-0137-0767 կադաստրային ծածկագրերով 2.5911 հա և 1.0349 հա մակերեսներով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Մասիս համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Մասիս քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզներում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի (Մասիս քաղաքի) հաստատված գոտևորման նախագծերում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | | Ե.Վարդանյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | Հ.Դավթյան |

Երևան, «11» «սեպտեմբերի» 2024 թ.